ռապէս հօրս գլխահարկը: Մայրս ցոյց էր տալիս այն նամակը, որ ստացել էր հօրս մահուան մասին, եւ ասում էր, որ մեռելի համար հարկ չեն վճարում: Բայց նրան չէին լսում, պատասխանում էին, թէ դուք խորամանկութեամբ հնարել էք այդ նամակը, որ հարկ չտաք, թէ նա դեռ կենդանի է: Մայրս աղաչում էր, որ փոքր-ինչ ժամանակ տան, մինչեւ արողանայ փող վաստակել եւ նրանց պահանջը լրացնել: Թէեւ ընդունուեցաւ խնդիրքը, բայց շատ թանկ նստեց այն մի ամիս ժամանակը, որ շնորհեցին մեզ, որովհետեւ առանց կաշառքի չէր կարելի գրաւել հարկապահանջների բարեսրտութիւնը: Այնուհետեւ մայրս գիշեր ու ցերեկ հանգստութիւն չունէր. ասեղը, ջահրեն եւ թեշին անդադար գործում էին:

Բայց ի՞նչ կարող էր լինել մօրս աշխատանքը, մանաւանդ մի այնպիսի երկրում, ուր տիրում էր ընդհանուր աղքատութիւն, ուր ամէն մարդ ինքն էր կատարում իր տան գործերը: Նա ընդունում էր երբեմն ապսպրանքներ հրէայ մանրավաճառներից, որոնք մի շապիկ կամ մի արխալուղ կարելու համար վճարում էին խիստ չնչին վարձատրութիւն: Այդ նրա ցերեկոյայ պարապմունքն էր: Իսկ գիշերների մեծ մասը անց էր կացնում նա իր ջահերով, կամ բամբակից թել էր պատրաստում եւ մանածը վաճառում էր ջուլհակներին եւ կամ թեշիով բուրդ էր մանում շալ գործողների համար: Ճրագալոյսի ծախսը դուրս գալուց յետոյ մնում էր այնքան վաստակ, որ հազիւ բաւական էր լինում շաբաթը մի անգամ, այսինքն տօն օրերում, միս գնելու եւ տաք կերակուր ուտելու: Մնացած օրերը ապրում էինք համարեա ցամաք հացով:

Մեզ շնորհուած մի ամիս ժամանակը անցաւ ստուերի պէս: Մայրս չկարողացաւ մի ամսում պատրաստել պահանջուած գումարը: Հարկահաւները ծախեցին մեր կայքից ամէն բան, որ կարող էր փոքր ի շատէ գին բերել, եւ նրանց թւում վաճառուեցաւ ցորենի մթերքը, որ հաւաքուած էր իմ, Մարիամի եւ Մագթաղի ձեռքով: Երեւակայեցէք մեր արտասուքը եւ մեր դրութիւնը այնուհետեւ: Աղքատութիւնը հասցրեց իր վերջին հարուածը, եւ շատ զգալի էր...

Այդ բոլորը կատարուեցաւ իմ մեծ քեռու եւ իմ մօր հինգ եղբայրների աչքի առջեւ: Բայց նրանք այնքան աղքատ չէին, որ չկարողանային օգնել մեզ, որ չկարողանային ազատել մեզ մեր անտանելի թշուառութիւնից:

Ես յետոյ, շատ յետոյ, հասկացայ այն սառնասրտութեան պատճառը, որ տիրում էր իմ մօր եւ նրա ազգատոհմի մէջ եւ որը արդէն ատելութեան կերպարանք էր ստացել: Մայրս, որպէս վերեւում յիշեցի, իր եղբայրների միակ քոյրն էր, նա իր աղջիկ ժամանակը շատ սիրուած էր թէ եղբայրներից եւ թէ հօրից: Ամէն կողմից խնդրում էին մօրս ձեռքը, ոչ այն պատճառով